



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

06 հոկտեմբերի 2021 թվականի թիվ 150-Ա

ք. Երևան

#### «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով 2021 թվականի սեպտեմբերի 14-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 44 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառնություններն իրականացնելիս՝ հայտնաբերել է Օրենքի պահանջի խախտում, այն է՝ տեսալսողական մեդիաձառայություն մատուցող «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) կողմից տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան մուտքագրված տվյալների հիման վրա՝ 2021 թվականի օգոստոսի 16-ից մինչև օգոստոսի 29-ն ընկած ժամանակահատվածում՝ «Կենտրոն» տեսալսողական ծրագրում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսի պահպանման վերաբերյալ դրույթի պահանջի խախտում:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով՝ 2021 թվականի սեպտեմբերի 14-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ հիմք ընդունելով Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից Հեռարձակողի գործունեության վերլուծության արդյունքների հիման վրա 2021 թվականի սեպտեմբերի 14-ին կազմված մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն՝ հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Արձանագրության մեջ մասնավորապես նշված է, որ իրականացնելով Հեռարձակողի կողմից տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան մուտքագրված տվյալների վերլուծություն, պարզվել է .

- օգոստոսի 16-ից մինչև օգոստոսի 22-ն ընկած ժամանակահատվածում (մեկ շաբաթ)՝ Հեռարձակողի կողմից հեռարձակված հաղորդումների ընդհանուր եթերային ժամանակը կազմել է 168 ժամ, իսկ այն հաղորդումները, որոնք Հեռարձակողի կողմից դիտարկվել են որպես մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածություն ունեցող և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը Հեռարձակողը մուտքագրել է հաշվառման էլեկտրոնային մատյան՝ ընդհանուր եթերային ժամանակը կազմել է 20 ժամ 43 րոպե 9 վայրկյան: Այսինքն, մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները կազմել են Հեռարձակողի շաբաթական եթերաժամի 12,3 տոկոսը:
- օգոստոսի 23-ից մինչև օգոստոսի 29-ն ընկած ժամանակահատվածում (մեկ շաբաթ)՝ Հեռարձակողի կողմից հեռարձակված հաղորդումների ընդհանուր եթերային ժամանակը կազմել է 168 ժամ, իսկ այն հաղորդումները, որոնք Հեռարձակողի կողմից դիտարկվել են որպես մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածություն ունեցող և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը Հեռարձակողը մուտքագրել է հաշվառման էլեկտրոնային մատյան՝ ընդհանուր եթերային ժամանակը կազմել է 27 ժամ 23 րոպե 29 վայրկյան: Այսինքն, մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները կազմել են Հեռարձակողի շաբաթական եթերաժամի 16,3 տոկոսը:

Ըստ արձանագրության՝ 2021 թվականի օգոստոսի 16-ից մինչև օգոստոսի 29-ն ընկած ժամանակահատվածում, «Կենտրոն» տեսալսողական ծրագրում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների տևողությունը կազմել է շաբաթական եթերաժամի 20 տոկոսից պակաս:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի սեպտեմբերի 15-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները և բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը 2021 թվականի սեպտեմբերի 17-ին Հանձնաժողով ներկայացրած իր գրավոր բացատրությունում հայտնել է այն մասին, որ տեղի ունեցածը թյուրիմացություն է եղել և իրականում Հեռարձակողին պատկանող տվյալ հաղորդումներն իրենց անուշադրության պատճառով ներկայացվել են սխալ ձևաչափով .

«Արդյոք ովքեր են» տեսալսողական հաղորդումը ներկայացվել է որպես ժամանցային, սակայն այն պատկանում է կրթական ձևաչափին:

«Ձայնային հարված» տեսալսողական հաղորդումը, որը ներկայացվել է որպես երաժշտական, պատկանում է մշակութային ձևաչափին:

Հաշվի առնելով Հեռարձակողի կողմից ներկայացված բացատրությունները վարչական վարույթի շրջանակներում Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից իրականացվել է Հեռարձակողի «Կենտրոն» տեսալսողական ծրագրի 2021 թվականի սեպտեմբերի 25-ի, սեպտեմբերի 26-ի և սեպտեմբերի 27-ի եթերի մշտադիտարկում և Հեռարձակողի կողմից ներկայացված հաշվառման էլեկտրոնային մատյանի 2021 թվականի օգոստոսի 16-ից մինչև օգոստոսի 29-ն ընկած ժամանակահատվածի տվյալների կրկնակի վերլուծություն: Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից իրականացված մշտադիտարկման և կրկնակի վերլուծության արդյունքում 2021 թվականի հոկտեմբերի 04-ին կազմվել է արձանագրություն:

Ըստ արձանագրության՝ «Արդյոք ովքեր են» տեսալսողական հաղորդման բովանդակությունը համաձայն՝ Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 28-ի «Թեմատիկ ուղղվածության չափորոշիչները, դրանց հասկացությունները սահմանելու մասին» թիվ 80-Ա որոշման, համապատասխանում է «Գիտակրթական տեսալսողական հաղորդում», իսկ «Ձայնային հարված» տեսալսողական հաղորդման բովանդակությունը՝ «Մշակութային տեսալսողական հաղորդում» չափորոշիչների հասկացություններին:

Արձանագրության մեջ մասնավորապես նշված է, որ 2021 թվականի հոկտեմբերի 04-ին իրականացնելով Հեռարձակողի 2021 թվականի սեպտեմբերի 25-ի, սեպտեմբերի 26-ի և սեպտեմբերի 27-ի եթերի մշտադիտարկում և Հեռարձակողի կողմից ներկայացված հաշվառման էլեկտրոնային մատյանի 2021 թվականի օգոստոսի 16-ից մինչև օգոստոսի 29-ն ընկած ժամանակահատվածի տվյալների կրկնակի վերլուծություն, պարզվել է .

- Սույն թվականի օգոստոսի 16-ից մինչև օգոստոսի 22-ն ընկած ժամանակահատվածում (մեկ շաբաթ)՝ Հեռարձակողի կողմից հեռարձակված հաղորդումների ընդհանուր եթերային ժամանակը կազմել է 168 ժամ, իսկ «Արդյոք ովքեր են» տեսալսողական հաղորդումը, որը Հեռարձակողի կողմից դիտարկվել է որպես «Ժամանցային» թեմատիկ ուղղվածության, իսկ «Ձայնային հարված» տեսալսողական հաղորդումը՝ որպես «Երաժշտական» ուղղվածության և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը Հեռարձակողը մուտքագրել է հաշվառման էլեկտրոնային մատյան՝ ընդհանուր եթերային ժամանակը համապատասխանաբար կազմել է 6 ժամ 12 րոպե 46 վայրկյան (կրթական) և 5 ժամ 10 րոպե 8 վայրկյան (մշակութային) կամ շաբաթական եթերաժամի 6,5 տոկոսը:

Հետևաբար, մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների ընդհանուր եթերային ժամանակը, որը կազմել էր 20 ժամ 43 րոպե 9 վայրկյան (12, 3 տոկոս), անհրաժեշտ է լրացնել, հաշվի առնելով մշտադիտարկման արդյունքում ի հայտ եկած հանգամանքները և Հեռարձակողի կողմից ներկայացված պարզաբանումները:

Այսպիսով, վերահաշվարկման արդյունքների հետ միասին սույն թվականի օգոստոսի 16-ից մինչև օգոստոսի 22-ն ընկած ժամանակահատվածում (մեկ շաբաթ)՝ մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության

տեսալսողական հաղորդումների ընդհանուր եթերային ժամանակը կազմում է 32 ժամ 6 րոպե 3 վայրկյան (18,8 տոկոս):

- Սույն թվականի օգոստոսի 23-ից մինչև օգոստոսի 29-ն ընկած ժամանակահատվածում (մեկ շաբաթ)՝ Հեռարձակողի կողմից հեռարձակված հաղորդումների ընդհանուր եթերային ժամանակը կազմել է 168 ժամ, իսկ «Արդյոք ովքեր են» տեսալսողական հաղորդումը, որը Հեռարձակողի կողմից դիտարկվել է որպես «Ժամանցային» թեմատիկ ուղղվածության, իսկ «Ձայնային հարված» տեսալսողական հաղորդումը՝ որպես «Երաժշտական» ուղղվածության և դրանց վերաբերյալ տեղեկատվությունը Հեռարձակողը մուտքագրել է հաշվառման էլեկտրոնային մատյան՝ ընդհանուր եթերային ժամանակը համապատասխանաբար կազմել է 5 ժամ 50 րոպե 33 վայրկյան (կրթական) և 7 ժամ 21 րոպե 28 վայրկյան (մշակութային) կամ շաբաթական եթերաժամի 7,8 տոկոսը:

Հետևաբար, մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների ընդհանուր եթերային ժամանակը կազմել էր 27 ժամ 23 րոպե 29 վայրկյան (16, 3 տոկոս), անհրաժեշտ է լրացնել, հաշվի առնելով մշտադիտարկման արդյունքում ի հայտ եկած հանգամանքները և Հեռարձակողի կողմից ներկայացված պարզաբանումները:

Այսպիսով, վերահաշվարկման արդյունքների հետ միասին սույն թվականի օգոստոսի 23-ից մինչև օգոստոսի 29-ն ընկած ժամանակահատվածում (մեկ շաբաթ)՝ մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների ընդհանուր եթերային ժամանակը կազմում է 40 ժամ 35 րոպե 30 վայրկյան (23,8 տոկոս):

### ***Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.***

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

«ՍՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերությունը Հանձնաժողովի 2021 թվականի հունվարի 15-ի թիվ 14-Ա որոշմամբ ճանաչվել է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման հանրապետական սփռման մրցույթի հաղթող և վերջինիս տրամադրվել է Հայաստանի Հանրապետության տարածքում հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա:

Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

«5. Լիցենզիա ստացած Հեռարձակողի ծրագրում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները պետք է կազմեն շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսը»:

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ լիցենզիա ստացած Հեռարձակողները պարտավոր են վարել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան, իսկ նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեսալսողական

հաղորդումները պետք է գրանցվեն կարգավորող պետական մարմնի համար հասանելիություն ունեցող տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում, որի ձևը և վարման կարգը սահմանում է կարգավորող պետական մարմինը:

Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 154-Ա որոշմամբ սահմանվել է տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի ձևը և վարման կարգը՝ համաձայն հավելվածի և հավելվածի 3-րդ և 4-րդ կետերը սահմանում են՝

«3. Տեսալսողական հաղորդումները լիցենզիա ստացած տեսալսողական մեդիաձառայություններ մատուցողների կողմից պետք է գրանցվեն Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) համար հասանելիություն ունեցող տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում:

4. Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների հիման վրա Հանձնաժողովը վերահսկում է տեսալսողական մեդիաձառայություններ մատուցողների գործունեության համապատասխանությունը օրենսդրության պահանջներին»:

Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի ձևի և վարման կարգի համաձայն՝ Հեռարձակողը տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան մուտքագրում է նշված կարգի 6-րդ կետի 1)-ից մինչև 6)-րդ ենթակետերում նշված տեղեկությունները և դրանց գրանցումը պարտադիր պայման է Հեռարձակողի համար:

Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի ձևի և վարման կարգի հավելվածի 6-րդ կետի 4)-րդ ենթակետը սահմանում է.

«6. Տեսալսողական մեդիաձառայություն մատուցողները տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում մուտքագրում են հետևյալ տեղեկությունները՝

4) տեսալսողական հաղորդման թեմատիկ ուղղվածությունը,»:

Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 28-ի «Թեմատիկ ուղղվածության չափորոշիչները, դրանց հասկացությունները սահմանելու մասին» թիվ 80-Ա որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ մասի 4-րդ կետով և 5-րդ կետով սահմանված են՝ «Թեմատիկ տեսալսողական հաղորդումների չափորոշիչները և դրանց հասկացություններն են՝

**4) Մշակութային տեսալսողական հաղորդում** - համամարդկային և ազգային մշակութային ժառանգությանը (պատմության և մշակույթի անշարժ, շարժական և ոչ նյութական ժառանգություն), մշակութային ստեղծագործական և հոգևոր արժեքներին ծանոթացնելու, սպառողի մոտ մշակութային գիտելիքներ, մտածողություն, գեղագիտական ճաշակ ձևավորելու, առօրյայի կազմակերպման մեջ մշակույթի ունեցած դերակատարության մասին հանրային ընկալումների վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու նպատակով ստեղծված տեսալսողական հաղորդումներ: Մշակութային տեսալսողական հաղորդումների թեմաներն են մշակույթի և արվեստի պատմությունն ու ներկա վիճակը, գրականությունը (այդ թվում՝ գրահրատարակչական գործը), արվեստի տարբեր դրսևորումները (թատրոն, կինո երաժշտարվեստ, պարարվեստ, երգարվեստ, կերպարվեստ և այլն).

**5) Կրթական տեսալսողական հաղորդում** - գիտության, մշակույթի, արվեստի և հանրային կյանքի ոլորտներում սպառողին գիտելիքներ տալու կամ ուսուցանելու նպատակով ստեղծված տեսալսողական հաղորդումներ: Կրթական տեսալսողական հաղորդման ժանրային առանձնահատկությունները բազմազան են (կրթական-ուսումնական և մասնագիտական-տեխնիկական առարկաների կանոնավոր տեսալսողական նյութեր, պարապմունքներ, վավերագրական ֆիլմեր և այլն):

**ա. Ուսումնական տեսալսողական հաղորդում** - կրթական և մասնագիտական առարկաներ ուսուցանելու, տարբեր ոլորտներում հմտությունների, գիտելիքների և ունակությունների ձեռքբերման նպատակով ստեղծված տեսալսողական հաղորդումներ, այդ թվում՝ դասախոսություններ, պարապմունքներ, ուսումնական ֆիլմերի ցուցադրություն, օտար լեզվի ուսուցման նպատակով արտադրված տեսալսողական հաղորդումներ և այլն:

**բ. Գիտակրթական տեսալսողական հաղորդում** - գիտության, մշակույթի և սոցիալական կյանքի ոլորտներին վերաբերվող գիտելիքներին սպառողին ծանոթացնելու նպատակով տեսալսողական հաղորդումներ, որոնց նպատակն է բարձրացնել նշված ոլորտներում քաղաքացիների տեղեկացվածության, հետաքրքրվածության և ընթացող գործընթացներին մասնակցության մակարդակը (հատուկ մասնագիտական տեսալսողական հաղորդումներ, վավերագրական ֆիլմեր, հարցազրույցներ, տեսալսողական վիկտորինաներ և այլն): »:

Հանձնաժողովն ամրագրում է, որ Հեռարձակողը տեսալսողական տեղեկատվություն հեռարձակելիս պարտավոր է պահպանել Օրենքով, ինչպես նաև տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները: Մասնավորապես՝ Օրենքով հստակ սահմանված է, որ Հեռարձակողի ծրագրում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները պետք է կազմեն շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսը:

Այսպիսով, վարչական վարույթի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է, որ Օրենքով Հեռարձակողների համար պարտավորություն է սահմանված՝ իրենց ծրագրում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումները պետք է կազմեն շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսը, որը Հեռարձակողի կողմից չի պահպանվել 2021 թվականի օգոստոսի 16-ից մինչև օգոստոսի 22-ն ընկած ժամանակահատվածում (մեկ շաբաթվա ընթացքում):

Փաստում ենք նաև, որ Հեռարձակողը Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ է, որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով, ուստի, օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելը առաջացնում են իրավական հետևանքներ և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթի պահանջը:

Հաշվի է առնելով հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողի կողմից ներկայացված բացատրությունները, Հանձնաժողովի կողմից իրականացվել է Հեռարձակողի էթերի մշտադիտարկում և Հեռարձակողի կողմից ներկայացված հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների կրկնակի վերլուծություն և տվյալների վերահաշվարկման արդյունքում, արձանագրվել է, որ Հեռարձակողի կողմից 2021 թվականի օգոստոսի 16-ից մինչև օգոստոսի 22-ն ընկած ժամանակահատվածում (մեկ շաբաթվա ընթացքում) իր ծրագրում չի պահպանվել մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսը:

Այսպիսով, Հեռարձակողի կողմից իրականացվել է իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի 57-րդ հոդվածի 23-րդ մասի հատկանիշներին:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

- 1) գրավոր նախազգուշացում.
- 2) տուգանք.
- 3) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.
- 4) հեղինակագորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 57-րդ հոդվածի 23-րդ մասը սահմանում է.

«23. Լիցենզիա ստացած Հեռարձակողի կողմից տեսալսողական ծրագրում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումների շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսի պահանջը չպահպանելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ Հասույթի 0.02 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով»:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 23-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 57-րդ հոդվածի 23-րդ մասով սահմանված տույժը՝ տուգանելով սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՄՈՒԼՏԻ ՄԵԴԻԱ-ԿԵՆՏՐՈՆ ԹԻՎԻ» ՓԲ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

**Վ. ՕՀԱՆՅԱՆ**

06 հոկտեմբերի 2021թ.

ք. Երևան